ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«11» հունիսի 2019թ. No 1549-Ա

№ 5651 13 JUN 2019 ժամ 12.00

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 162-Ն 62-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101096119 առ 07.06.2019թ. գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել թվով 4 դեղերի հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

11.06.2019

X

VERIFIED OCSP 11.06.2019 16:17:12 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի

2019 թվականի հունիս « 11 » - ի

N 1549 – Ա հրամանի

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Բաց Թողման կարգ | Եզրակացության համար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Անտրոլին | նիֆեդիպին, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | նրբաքսուք ուղիղաղիքային | 300մգ+1500մգ; 30գ ալյումինե պարկուճ | Նյու.Ֆա. Դեմ.Արլ. ,Վիալե Ֆերովիա դելը Ստատո, Զոնա Ա.Ս.Ի.,80014 Ջուլիանո ին Կամպանիա (Նա) | Իտալիա | Մեդինտորգ ԲԸ, Սուշչեվսկայա փ. 19, տ. 5, ս. I, գ/ս 206, 127055, Մոսկվա, Ռուսաստան | Դ | 18219 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Նյուկոֆեն | ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին | դեղահատեր | 200մգ+200մգ+ 40մգ; (200/20x10/) բլիստերում | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | Գիգա Ֆարմ ՍՊԸ, Գոգունցի փ.3/5, Գյումրի, Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 13970 |
| 3. | Ալկա-Զելցեր | ացետիլսալիցիլաթթու, կիտրոնաթթու, նատրիումի բիկարբոնատ | դեղահատեր դյուրալույծ | 324մգ+965մգ+1625մգ; (10/5x2/) ստրիպում | Բայեր Բիտերֆելդ ԳմբՀ,Օրտստեյլ Գրեպին, Սալեգաստեր Շոսե 1, 06803 Բիտերֆելդ-Վոլֆեն | Գերմանիա | ԲԸ ԲԱՅԵՐ, 3-րդ Ռիբինսկայա փ., 18, շ. 2, 107113 Մոսկվա, Ռուսաստան | ԱԴ | 18020 |
| 4. | ԻՄՄՈՒՆՈՄ ԱՔՍ ԲԻՈ | Պեպտիդոգլիկան | դեղափոշի լիոֆիլիզացված մ/մ ներարկման | 200ՄՄ; (3) ապակե սրվակ | ԻՄՄԱՖ ԱՐՄԱ ՍՊԸ, 18/11, | Ռուսաստան | Ավեքսիմա ԲԲԸ, 31Ա/1, Լենինգրադսկի պող., | Դ | 16073 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | լուծույթի | | Գամալեյայի փ., Մոսկվա, 123098՝ | | Մոսկվա, 125284, Ռուսաստան | | |